

նմա՝ որպէս արու գաւակի. եւ բաւական է Ըռովքինի գոր արարեր, եւ հաստա-տեցեր զնա յաթոռ հայրենեաց իւրոց: Եւ թագաւորն հաւանեցաւ՝ ի բանս իշխանաց իւրոց»²¹⁴: Թուի թէ ցայն վայր խղճէր Լեւոն՝ աղջկան միոյ եւ այն անտիականի՝ թողուլ զժառանգութիւնն. ոչ այնքան զի չէր օրինաւոր, այլ զի եւ բազմաց ցանկանալով թագուհւոյն եւ թագին, թերեւս բռնաբարութեանց մարթեր լինել յետոյ առիթ. այլ այժմիկ տիրասիրութիւն պարոնայց իւրոց քաջալերեաց զնա, եւ այնուհետեւ խոկայր կանխել գտանել նմա փեսայ պատշաճաւոր եւ իւր յաջորդ արժանաւոր:

Թուեցաւ եւ յայսմ մեծի խնդրի՝ յաջողեալ բաղդին՝ Լեւոնի, եւ յանկարծուց ծագաց երեւեցուցանել նմա փեսայ թագազարմ. թէպէտ եւ ոչ այնպէս կատարեցաւ գործն, այլ ինքն Լեւոն այնու յուսով ննջեաց յանդորրու: Քանզի զայնու ժամանակաւ՝ (1217) ըստ կանխաւ եւ երկարժամանակեայ ըղձից եւ պատրաստութեանցն Իննովկենտեայ հանգուցելոյ, շարժեալ արեւմտեայց՝ իխաչակրութիւն, առաջնորդ կարգեալ էին միաբանութեամբ զԱնդրէաս Բ թագաւորն Ունգարաց. որոյ նաւարկեալ յաշնայնի տարւոյն՝ իՍպալատրոյ քաղաքէ Դաղմատիոյ, եհաս ել՝ իԿիպրոս, եւ անտի չոքաւ՝ իՄոտոմայիս, ուր համախմբեցան ընդ նմին՝ ուղեկիցն իւր Դուքսն Աւստրիոյ Լէոբոլտ, փեսայն Լեւոնի՝ թագաւորն Երուսաղեմի, ասպետքն, նուիրակք Քահանայապետին, եւ ամենայն իշխանք երկրին Ասորոց²¹⁵: Հարիւրաւոր յիշատակողք են իրացս յարեւմտեայց, եւ շատք լռեն. բայց են եւ որք յիշեն ընդ Խաչակիրսն եւ զմերս Լեւոն՝ եկեալ՝ ի Պտղոմայիս, յօգնութիւն եւ յողջոյն փեսայի իւրում Յովհաննու թագաւորի. եւ իբրու նորադէպ իմն նշանակեն, զի չորք թագաւորք գտան անդ նիզակակիցք, Երուսաղեմին, Կիպրոսին, Ունգարացն եւ Հայոցս²¹⁶. եւ միաբանս խաղացին՝ իՊաղեստին՝ իԹաբոր լեռոն, առնուլ զբերդն ամուր որ՝ իգա-

²¹⁴ Ջայսուսիկ գրէ արքունի պատմիչ մեր:

²¹⁵ Պատմիչն մեր արքունի՝ փոքր մի խառնակ կամ կրկնակ թուէ զնիզակակիցսն. «Դուքսն Ալամնաց տ'Աւստրիճն բազում զօրօք, եւ ընդ նմա թագաւորն Ունգրաց Անդրէ՝ սակաւ զօրօք, եւ տուկ տ'Աւստրիճն, եւ թագաւորն Երուսաղեմի Ըռէ Ճուանն, եւ տունն Ֆրերացն՝ մայստոներովն, Դամիլն (Տաճարականք), եւ Ոսպիտալն ամենայն գովանթովն (couvent),

Տամիաթ՝ ուր ամրագոյն պուրճն էր շինեալ ՚ի վերայ նաւահանգստին», եւ այլն:

²¹⁶ ԷՐՆՈՒԼ (ERNOUL) որ գրէր յամի 1228, ասէ. «Après vint li rois d'Ermenie rois Jehan et sa fille espous terres), qui arrives i estoit».

եւ Լիկաթն ՚ի .

à Acre, quant li ée. Or furent à A